Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9278
3KՈ5
Z-24
25 SEP 2006
09 DEC 2006

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## ԲԱՄԲԱԿԱՑԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՒՍ. ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏ ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԲՋԻՋՆԵՐԻՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄՖՐԱԿՑԻԱՆԵՐԻՆ

*Մեր յերկրի ծանր արդյունաբերության թափուն զարգացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում ձեռք բերված նվաճումների հիման վրա, կուսակցության 16-րդ համագումարն առաջադրեց նաև թեթև արդյունաբերության ավելի արագ զարգացման պրոբլեմը: Համագումարի այդ վորոշումը հնարավոր է և իրագործելի այն դեպքում, յերբ մեր կուսակցական, խորհրդային կազմակերպությունները բոլշևիկյան տեմպերով և վճռականությամբ առաջ կտանեն թեթև արդյունաբերության հումքային բազայի զարգացման խնդիրը, կապահովեն վերջինս անհրաժեշտ հումքով:*

*Տեքստիլ արդյունաբերությունը, վորը հանդիսանում է թեթև արդյունաբերության կարեվորագույն ճյուղերից մեկը, մեզանից պահանջում է ապահովել նրա անընդհատ աշխատանքը հումքով (բամբակով), ամբողջովին ազատվելով կապիտալիստական յերկրներից բամբակ ներմուծելուց: Այս խնդրի տեսակետից բամբակի ցանքերի տարածության լայնացման խընդիրը մեր կուսակցության տնտեսական-քաղաքական*

17.09.2013
17.09.
9217

աշխատանքների հիմնական հարցերից մեկն է հանդիսանում ներկայումս:

Վերահիշյալից ելնելով, 1931 թվի գարնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում ծրագրված է բամբակի ցանքսի տարածությունն Անդրկովկասում հասցնել 250.000 հեկտարի՝ անցյալ տարվա 150.000 հեկտարի փոխարեն, Հայաստանում 25.000 հեկտարի, անցյալ տարվա 16.000 հեկտարի փոխարեն:

Կենտկոմը մատնանշում է, որ 5-ամյա պլանով բամբակի ցանքսերի տարածությունն Հայաստանում հասնելու յէ մոտ 50.000 հեկտարի: Այդ պատճառով ընթացիկ 31 տարվա պլանի հարյուր տոկոսի իրագործումը յերաշխիք պետք է հանդիսանա բամբակի ցանքադաշտերի լայնացման 5-ամյա պլանի իրագործմանը առաջիկա յերկու տարում:

Վերահիշյալից ելնելով, ՀԿԿ(բ) Կենտկոմը բամբակացան շրջանի կուս. և կոմյերիտ բջիջներին, անկուսակցական որգանների կոմֆրակցիաներին և բամբակացան շրջանների կուսակցական բոլոր ընկերներին առաջարկում է.—

Մոբիլիզացիայի յենթարկել կուս. և կոմյերիտ կազմակերպություններին, կոլտնտեսականներին, չքավոր ու միջակ գյուղացիությանը և կուսակցական բոլոր չարժարեր ուժերը (գյուղխորհուրդ, կոոպերացիա, ԼԿՅԵՄ բջիջներ, պատգամավորական ժողովներ և այլն) բամբակի ցանքատարածության 1931 թվի մարտական պլանը հարյուր տոկոսով իրագործելու համար:

Կենտկոմի որոշմամբ դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 20-ը հայտարարվում է բամբակի 1931 թվի պլանների մասսայականացման հարվածային ամիս: Այդ ժամանակամիջոցում կուսկազմակերպություննե-րը պլանները պետք է հասցնեն մինչև գյ[illegible]ր, կոլտնտեսությունը, անհատական չքավոր—միջակային և կուլակային տնտեսությունները:

Կենտկոմը մատնանշում է, որ շնորհիվ կուսակցական և խորհրդային առանձին կազմակերպությունների վոչ սիստեմատիկ հսկողությանը և աչալրջությանը՝ անցյալ տարի առանձին տնտեսություններ, հատկապես կուլակային և ուռճացած տնտեսությունները կարողացան թաքցնել բամբակի համար պլանի հողային տարածությունները՝ փոխարինելով այն հացահատիկային կուլտուրաներով: Սրան պետք է ավելացնել նաև այն, որ գրեթե բոլոր բամբակացան շրջանները և նույնիսկ մի քանի կոլտնտեսություններ վոչ միայն չկատարեցին իրենց պլանները, այլև ուռցրած, սխալ և իրականության չհամապատասխանող տվյալներով շփոթության մեջ գցեցին վերադաս որգաններին (Ղուրդուղուլիի կոլտնտեսություն, «Անաստված» կոլտնտեսություն և այլն):

Վեդիի շրջանային կոմիտեն փոխանակ գլխավորելու բամբակի ընթացիկ տարվա կամպանիան և վճռական հակահարված տալու դասակարգային թշնամու ընդդիմադրությանը՝ ցույց տվեց կատարյալ անճարակություն և ոպորտունիստական վերաբերմունք դեպի տնտեսական և քաղաքական կարևորագույն այս կամպանիան, որի պատճառով Կենտկոմը փոխեց Վեդիի շրջկոմի ղեկավարությունը:

Կենտկոմն առաջարկում է 1931 թվի շրջանային պլանները մանրամասն կերպով քննության առնել շրջանային կոմիտեներում, գյուղական պլանները գյուղկոմ. և ԼԿՅԵՄ բջիջներում, կոլտնտեսություններում, բատրակա-չքավորական ժողովներում, գյուղխորհրդում և հասարակական ժողովներում: Այս գործը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր

գյուղ, կոլտնտեսություն, անհատական չքավոր-միջակային և հատկապես կուլակային և ուռճացած տնտեսությունն ստանա ռեալ, փորձված և հաստատուն պլանային առաջադրություններ բամբակի ցանքսի տարածության վերաբերյալ: Գյուղբջիջներն ու գյուղխորհուրդները պետք է հսկեն և պատասխանատու լինեն այդ պլանների ամբողջական իրագործման համար: Բամբակի համար պիտանի բոլոր այն հողամասերը, վորոնք հակառակ տեղական օրգանների ցուցմունքներին ցանվել են հացահատիկային և այլ կուլտուրաներով՝ անմիջապես պետք է վերահերկել՝ գարնանը բամբակ ցանելու համար:

Կազմակերպչական և բացատրական վերահիշյալ աշխատանքների հետ միասին, Կենտկոմն առաջարկում է ձեռք առնել բոլոր միջոցները՝ բամբակի աշնանավարի պլանը հարյուր տոկոսով իրագործելու համար (վերջին տվյալներով աշնանավար արված է ընդամենը 8·500 հեկտար՝ 14·000-ի փոխարեն): Անհրաժեշտ է Սարդարաբադի և Ուլուխանլվի մեքենա-տրակտորային կայանների լրիվ ծանրաբեռնվածությամբ և գյուղական ինվենտարի կազմակերպման և մաքսիմում օգտագործման միջոցով ամբողջովին իրագործել աշնանավարը: Կենտկոմը կուսկազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր հարվածային ամսվա ընթացքում և վողջ ընթացիկ ձմեռը սիստեմատիկաբար նախապատրաստվեն բամբակի գարնան ցանքի հետ կապված բոլոր խնդիրները (սերմացվի հայթայթում, մեքենաների նորոգում, ձիա-մեքենային և յեզամեքենային կոլոնաների կազմակերպում, բամբակացան շրջաններին տրվելիք նոր վարկերի ռացիոնալ օգտագործում և այլն):



Բամբակի ցանքատարածության ընդլայնումը պահանջում է ջրային մեծ ռեսուրսներ և նրանց ռացիոնալ օգտագործումը: ԿԿ-ն առաջարկում է Հայջրտնտեսությանը՝ բամբակի 31 թվի ցանքատարածությունն ամբողջապես ապահովել ջրով: Կենտկոմն առաջարկում է շրջանային կոմիտեներին՝ առավելագույն ուշադրություն դարձնել ջրի ռացիոնալ օգտագործման խնդրին և մշակել այդ հարցի հետ կապված գործնական ձեռնարկումներ (առուների մաքրման խնդիրը, ջրային ցանցի վերակառուցումը, ոռոգման ռեժիմի պահպանումը և այլն):

Կենտկոմը բամբակացան շրջանների կուսկազմակերպությունների հատուկ ուշադրությունն է հրավիրում բամբակի բերքատվության բարձրացման խնդրի վրա: Անցյալ տարի մի շարք վայրերում և կոլտնտեսություններում անհրաժեշտ ուշադրություն դարձված չի յեղել մինչև իսկ մինիմում ագրո-ձեռնարկումների իրագործմանը (աշնանավար, քաղհան, բուկլցնել, ժամանակին ջրել և այլն) բամբակի դաշտերում: Այդ իսկ պատճառով, բամբակի բերքատվությունն այս տարի չհասավ մեր պլանային յենթադրություններին: Կենտկոմը Հողժողկոմատին և բամբակացան կոոպերացիային առաջարկում է մշակել համապատասխան միջոցներ՝ 1931 թվի բամբակի ցանքսի ամբողջ տարածությունը ագրո-ձեռնարկումներով և պարարտանյութով ապահովելու համար: Շրջանային կոմիտեներին՝ Հողժողկոմատի հետ միասին կազմակերպել ագրո-լիազորների վերապատրաստման դասընթացներ, ինչպես և բացատրական լայն աշխատանք տանել գյուղացիության մեջ՝ ագրոմինիմումն իրագործելու համար: Կենտկոմն ընդգծում է, վոր մեր առաջ վորպես հիմնական

խնդիր՝ դրված է ոչ միայն բամբակի ցանքերի տարածության ավելացումը, այլև բերքատվության բարձրացումը:

Բամբակի 1931 թվի բոլշևիկյան պլանի իրագործումն իր հիմքում պետք է ունենա կոլտնտշարժման նոր վերելքի ստեղծումը: Նա պետք է խթան հանդիսանա նոր կոլտնտեսությունների կազմակերպմանը, նոր հազարավոր և տասնյակ հազարավոր չքավոր ու միջակ գյուղացիների ներգրավմանը կոլտնտեսություններում: Բամբակացան շրջանների համար մշակված կոլեկտիվացման 1931 թվի ստուգիչ թվերը միանգամայն իրագործելի պիտի համարել: (Ղուրդղուլի 55 տոկոս, Վաղ-պատ 42 տոկոս, Ղամարլու 40 տոկոս, Վեդի 13 տոկոս): Կենտկոմն առաջարկում է բամբակացան շրջանի կուսկազմակերպություններին, բամբակի արտադրական պլանի իրագործման բազայի վրա կուլակին ջախջախիչ հարված տալու նշանաբանով, ծավալելով վճռական և չեչտակի պայքար աջ օպորտունիզմի դեմ՝ որպես գլխավոր վտանգի, հարվածելով և արմատախիլ անելով «ձախ» խոտորման յուրաքանչյուր ունցեղկելը, արտադրական նոր ընկերությունների կազմակերպման, յեղածների ամրապնդման և կոլտնտեսությունների նվաճումների լայն բացատրման միջոցով առաջ տանել կոլեկտիվացման գործը՝ ամբողջ ուժով նախապատրաստելով կուլակի լիկվիդացիան որպես դասակարգի՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Կասկածից դուրս է, որ բամբակի 1931 թվի պլանի իրագործումը, կոլտնտշարժման նոր վերելքը և վերահիշյալ բոլոր ձեռնարկումներն էլ ավելի կսրեն դասակարգային պայքարը գյուղում: Գյուղի կուլակը, դաշնակը, հակախորհրդային տարրերը, ինչպես



նաև աջ օպորտունիստները կատաղի դիմադրություն ցույց կտան բամբակի պլանների իրագործմանը և ձեռք կառնեն բոլոր միջոցները՝ վիժեցնելու այն: Կենտկոմն առաջարկում է մոբիլիզացիայի յենթարկել կուսկոմյերիտական կազմակերպությունները, կոլտնտեսական և չքավոր-միջակ գյուղացիությանը, դասակարգային թշնամուն և նրա ագենտուրային՝ աջ օպորտյունիզմին վճռական հակահարված տալու համար: Կենտկոմը մատնանշում է, որ բամբակի ցանքերի յուրաքանչյուր հեկտարի ավելացումը մի նոր բակի համար, դա պայքար է ընդդեմ կուլակի: Ահա հարված է դասակարգային թշնամուն և պայքար բամթե ինչու դաշնակցականները վայնասուն են բարձրացնում ընդդեմ բամբակի պլանների իրագործման: Ահա թե ինչու նրանք սուտ պրովոկացիաներ են տարածում այն մասին, թե իբր խորհրդային իշխանությունը շահագործում է բամբակացան գյուղացիներին այն ժամանակ, յերբ ամենաարագ թափով բարելավվում է Ղուրնակ, Վեդիի, Վաղարշապատի և Ղամարլուի ղուղլիի, բամբակացան կոլտնտեսականների և չքավոր ու միջակ գյուղացիների տնտեսական դրությունը:

Կենտկոմը կոչ է անում կուսկոմյերիտական կազմակերպություններին, կոլտնտեսականներին և չքավոր ու միջակ գյուղացիներին, փաստացի, կոնկրետ նվաճումների հիման վրա արժանի հակահարված տալ դաշնակցական սուտ պրովոկացիային և ջախջախել կուլակի դիմադրությունը: Առանց կուլակ-դաշնակ տարրերին ջախջախիչ հարված տալու և նրանց դիմադրությունը կոտրելու անհնար կլինի բամբակի 1931 թվի պլաններն իրագործել:

Կենտկոմը նախազգուշացնում է կուսակցական բոլոր կազմակերպություններին, որ բամբակի 1931

թվի պլանի իրագործումը պետք է գնա ոչ միայն իշխանության բարձրագույն և տեղական օրգանների ադմինիստրատիվ փորոշումներով, այլև առաջին հերթին մասսայական լայն բացատրական աշխատանքի ծավալմամբ, կոլտնտեսականների, չքավոր ու միջակ գյուղացիների ուժերի մոբիլիզացիայով: Շրջկոմները և մամուլի օրգաններն օգտագործելով բամբակացան շրջանների գյուղացիության ձեռք բերած նվաճումները, նրանց տնտեսական գրության բարելավումը, պետք է ծավալեն բացատրական ագիտացիոն լայն աշխատանք գյուղացիության մեջ 1931 թ. պլանների իրագործման շուրջը:

Կենտկոմն առաջարկում է այս նամակը մանրամասն կերպով քննության առնել բամբակացան շրջանների կուսկոմյերիտական բոլոր բջիջներում և անկուսակցական օրգանների կոնֆերանսներում՝ նշելով տվյալ կազմակերպության այդ ուղղությամբ կատարվելիք բոլոր ձեռնարկումները:

Կենտկոմն ընդգծում է, որ բամբակացան շրջանների կուսկազմակերպությունների աշխատանքի գըլխավոր չափանիշը պետք է հանդիսանա բամբակի **1931** թվի պլանի **100** տոկոսի իրագործումը:

Հ. Կ. Կ. (բ) Կ. Կ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

**Ա. ԽԱՆՋՅԱՆ**

ՀՀ Ազգային գրադարան
NL0187442
ЗКП5
Z-24

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ 1138 ՏԻՐԱԺ 800 ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է